ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5(75), 30 հունիս, 2025թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Է ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԳՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.

ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հիմք ընդունելով 2014 թվականի սեպտեմբերի 17-ին ստորագրված հուշագիրը՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի և Վրաստանի ՆԳՆ ակադեմիայի միջև ձեռք բերված աշխատանքային պայմանավորվածության հիման վրա հունիսի 19-ին տեղի ունեցավ առցանց հանդիպում՝ նպատակ ունենալով ակտիվացնել և խորացնել երկու բուհերի միջև գոյություն ունեցող համագործակցությունը:

Հանդիպման մեկնարկին ողջույնի խոսքերով հանդես եկան Կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մանուկ Մուրադյանը և Ակադեմիայի ռեկտոր, ոստիկանության գեներալ-մայոր Լելա Չիկովանին: Բուհերի ղեկավարներն ընդգծեցին համագործակցության կարևորությունը, ուղղությունները և մեթոդաբանությունը:

Աշխատանքային քննարկման ընթացքում կողմերն անդրադարձան համագործակցության առկա ներուժին և այն ընդլայնելու հնարավորություններին: Համաձայնություն ձեռք բերվեց երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հետագա քայլերի շուրջ, մասնավորապես՝ կրթական հաստատությունների միջև նոր հուշագրի կնքման, ռազմավարական զարգացման, բարեփոխումների ու ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացման փորձի փոխանակման, համատեղ ուժերով վերապատրաստումների իրականացման հնարավորության և այլ հարցերի շուրջ:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՉՄՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ

ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման՝ Ստեփանավանում տեղակայված մասնաշենքում ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին տեղում ծանոթանալու և մինչ այցն իրականացված տեխնիկատնտեսական ու լոգիստիկ կարիքների գնահատման հիման վրա կրթական միջավայրի բարելավմանը միտված հասցեական օժանդակություն ցուցաբերելու, ինչպես նաև այլ կարիքների վերհանման, այդ թվում՝ սովորողներին և դասախոսական կազմին հուզող խնդիրներին լուծում տալու նպատակով օրերս Ստեփանավան են այցելեցին Կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մ. Մուրադյանը, պրոռեկտորներ Է. Մարգարյանը, Ա. Սուքիասյանը, տնտեսական սպասարկման և սպառազինության ապահովման բաժնի պետ Հ. Մարգարյանը:

Այցի շրջանակում կայացավ Մ. Մուրադյանի ճանաչողական հանդիպումը դասախոսական կազմի և կրթական գործընթացի կազմակերպման պատասխանատուների հետ, ներկայացվեցին ուսումնական գործընթացում կիրառվող տեխնիկական միջոցներն ու սարքերը: Առաջադրված հարցերի և հնչած նախաձեռնությունների, առաջարկությունների շուրջ ծավալված քննարկումների ընթացքում հավանության է արժանացավ դասախոսների և սովորողների առկա ներուժն աղետների ռիսկի նվազեցման գիտելիքի տարածմանն ի սպաս բերելու պատրաստակամությունը, փրկարարական աշխատանքներում հեռակառավարվող սարքերի շահագործման առկա համակարգչային տեխնիկան և սարքավորումներն արդիականացնելու անհրաժեշտությունը, ուսուցումը ներկա մարտահրավերներին համահունչ իրականացնելու ջանքերը:

Այցի արդյունքներով, Մ. Մուրադյանի հանձնարարությամբ՝ սեղմ ժամկետներում Ստեփանավանում ուսուցումը կկազմակերպվի վերազինված լսարաններում, սովորողները հնարավորություն կստանան իրական պայմաններում փորձարկել և շահագործել ռոբոտատեխնիկան, անօդաչու սարքերը, իսկ դասախոսական կազմը կներգրավվի ՓԾ և ՃԿ ուսումնական ստորաբաժանումում կրթական չափորոշիչների մշակման աշխատանքներին: Որպես հրավիրյալներ՝ այսուհետ Կրթահամալիրի գիտական խորհրդի նիստերի աշխատանքին առցանց ձևաչափով կմասնակցեն նաև Ստեփանավանի դասախոսներն ու սովորողները՝ հնարավորություն ստանալով բարձրաձայնել իրենց խնդիրները, տեղեկանալ գիտական խորհրդում քննարկվող հարցերի և ընդունվող որոշումների մասին:

ՄԱԿ-Ի ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Հունիսի 9-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մ. Մուրադյանն ընդունել է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) հայաստանյան գրասենյակի ղեկավար Լուսինե Սարգսյանին և գրասենյակի այլ աշխատակիցների:

Հանդիպման նպատակն էր քննարկել ՄԱԲՀ–ի և Կրթահամալիրի միջև համագործակցության հնարավոր ուղղությունները՝ հաշվի առնելով, որ ներկայումս մշակվում է հիմնադրամի՝ ՀՀ-ում գործունեության հնգամյա պլանը:

Քննարկվեցին ոստիկանության շահագրգիռ ստորաբաժանումների ծառայողների համար ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ իրականացնելու, դրանք Կրթահամալիրի ապագա կրթական ծրագրերում ներդնելու հարցերը: Լ. Սարգսյանն անդրադարձ կատարեց նաև փրկարարների համար մշակված վերապատրաստման դասընթացների փաթեթներին, որոնք առաջնային գիտելիքներ են տալիս արտակարգ իրավիճակներում դաշտային գործողություններն արդյունավետ իրականացնելու համար:

Հանդիպման ավարտին Մ. Մուրադյանն առաջարկեց ապագա համագործակցությունն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու համար դիտարկել փոխըմբռնման հուշագիր ստորագրելու հնարավորությունը, ինչը թույլ կտա հստակ նախանշել համագործակցության ուղղություններն ու արդյունավետ իրականացնել այդ առնչությամբ տարվող աշխատանքները:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հունիսի 16-ին ՆԳՆ կրթահամալիրում տեղի է ունեցել Մեթոդական խորհրդի՝ 2025թ. առաջին նիստը, որը վարել է խորհրդի նախագահ, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտահետազոտական և նորարարությունների գծով աշխատանքները համակարգող պրոռեկտոր Էմիլ Մարգարյանը:

Օրակարգում ընդգրկվել են՝ Կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի պետ, հ.գ.թ., դոցենտ Նաիրա Նազարյանի «Հաղորդակցման հոգեբանություն (ոստիկանության ծառայողների համար)» ուսումնական ձեռնարկը, նույն ամբիոնի ավագ դասախոս, մ.գ.թ. Մարիամ Առաքելյանի «Իրավաբանական անգլերեն մեդիատեքստերի ընթերցանությունը համացանցի միջոցով» մենագրությունը և Կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման բազային և սպայական կրթության դեպարտամենտի պետ, հ.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Հռիփսիմե Խաչատրյանի «Կրիմինալոգիա» ընդհանուր մաս ուսումնական ձեռնարկը մեթոդական խորհրդում երաշխավորելու հարցերը:

Մեթոդական խորհուրդը երաշխավորել է վերը նշված աշխատությունները ներկայացնել ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհուրդ:

ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ IN SERVICE ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

Այս թվականի հունիսի 9-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությունում մեկնարկեցին պարեկային ծառայողների վերապատրաստման in service դասընթացները:

Վերապատրաստման մեկնարկին ներկա էին ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի տեղակալ, պարեկային ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Խուդինյանը և ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մ.Մուրադյանը: Վերապատրաստում անցնող ծառայողների և դասախոսների հետ ծավալված բովանդակային քննարկման արդյունքներով որոշվեց դասընթացների ավարտին ընդհանրացնել վերապատրաստման արդյունքները, վեր հանել խնդրահարույց հարցերը և դրանց հիման վրա լրամշակել պարեկային ծառայողների հետագա շարունակական կրթության բովանդակությունն ու մեթոդաբանությունը:

ՀՀ ներքին գործերի նախարարի կողմից հաստատված՝ վերապատրաստման ուսումնական պլանում ներառված թեմաները վերաբերում են պարեկային ծառայողների կողմից իրականացվող վարչական վարույթին և վարչարարությանը, տրանսպորտային միջոցը կանգնեցնելու, շահագործումն արգելելու, պահպանվող տարածք տեղափոխելու ընթացակարգերին, պարեկային ծառայողի էթիկային և բարեվարքությանը, պարեկային ծառայության գործունեությունում գենդերային հարցերին, ինչպես նաև ոստիկանության ծառայողների կողմից հատուկ միջոց և հրազեն կրելու ու գործադրելու (կիրառելու) իրավական հիմքերին և հմտություններին:

Վերապատրաստումներն ընդգրկելու են ինչպես Երևան քաղաքի և պարեկային ծառայության վարչակազմի, այնպես էլ՝ բոլոր մարզերի ստորաբաժանումները: Վերապատրաստման պարտադիր դասընթացները նախատեսվում է ավարտել սեպտեմբերի 27-ին, իսկ սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ը նախատեսվում է իրականացնել կամընտրային դասընթացները՝ նախապես հայտագրված պարեկային ծառայողների կողմից ընտրված թեմաներով:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՌՑԱՆՑ ՁԵՎԱՉԱՓՈՎ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԿԱՐԱԳԱՆԴԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

2025 թվականի հունիսի 13-ին Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Կարագանդայի ակադեմիայի նախաձեռնությամբ անցկացվեց միջազգային գիտագործնական համաժողով՝ նվիրված Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության 30-ամյակին: Համաժողովը կրում էր «Ներքին գործերի մարմինները՝ իրավունքի գերակայության ապահովման և մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրահիրավական մեխանիզմները» խորագիրը:

Համաժողովի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան Ղազախստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Հայաստանի մի շարք ուսումնական հաստատությունների, ինչպես նաև այլ պետական կառույցների ներկայացուցիչներ:

Հայաստանից համաժողովին ողջույնի խոսքով հանդես եկավ Կրթահամալիրի պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Միսակ Մարկոսյանը, ով կարևորեց համաժողովի թեմատիկ ուղղվածությունն ու մաղթեց արդյունավետ ընթացք համաժողովի աշխատանքներին:

Միջազգային համաժողովի շրջանակում մասնակիցները զեկույցներ ներկայացրին:

Կրթահամալիրից որպես ունկնդիրներ մասնակցեցին նաև Ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ամալյա Սաֆարյանը և նույն ամբիոնի ավագ դասախոս Աբգար Մարգարյանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ

Հունիսի 3-ին ՆԳՆ կրթահամալիրի ուսանողական խորհրդի նախագահ Գայանե Բաբաջանյանը և Երևանի պետական հումանիտար քոլեջի ուսանողական խորհրդի արտաքին կապերի հանձնաժողովի նախագահի ժ/պ Մարինա Կարապետյանն ստորագրել են համագործակցության հուշագիր՝ նպատակ ունենալով երկուստեք աջակցել ուսանողական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանը և խթանել ուսանողական կառույցների համագործակցությունը:

Բացման խոսքում Գ.Բաբաջանյանը կարևորեց ուսանողական կառույցների միջև կայուն կապերի ձևավորումն ու ուսանողների քաղաքացիական և մասնագիտական զարգացմանն ուղղված նախաձեռնությունների խթանումը, նշեց, որ Հուշագրի ստորագրումը նշանավորում է նոր համագործակցության մեկնարկ, ինչը ոչ միայն կխթանի ուսանողական կառույցների փորձի փոխանակումը, այլև կնպաստի քոլեջի ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը՝ հնարավորություն տալով ծանոթանալու իրավապահ համակարգի աշխատանքին, կառուցվածքին և հեռանկարներին:

Մ.Կարապետյանը նշեց, որ մեծապես կարևորում են նմանատիպ նախաձեռնությունները, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ: Ընդգծեց նաև, որ ուրախ են համագործակցության այս հնարավորության համար և վստահ են, որ իրականացվելիք համատեղ ծրագրերը կլինեն արդյունավետ ու երկարաժամկետ:

Միջոցառման ավարտին հյուրերը շրջայց կատարեցին ՆԳՆ Կրթահամալիրի տարածքում և այցելեցին Ոստիկանության պատմության թանգարան:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԵՎՐՈՊՈԼՈՒՄ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջազգային համագործակցության և հանրային կապերի բաժնի պետ Կարինե Սաֆարյանը մայիսի 26-27-ը Հաագայում մասնակցել է ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) TOPCOP II ծրագրի 3-րդ բաղադրիչի (հանցավոր սպառնալիքների գնահատում և հատուկ աջակցություն) շրջանակում կազմակերպված առաջին աշխատաժողովին:

Մասնակցում էին Արևելյան գործընկերության երկրներից Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի, Ուկրաինայի, իսկ Եվրամիջերկրածովյան գործընկերության երկրներից՝ Լիբանանի, Հորդանանի, Թունիսի, Մարոկկոյի ներկայացուցիչները:

Աշխատաժողովի առաջին օրն ամբողջությամբ նվիրված էր հանցավոր սպառնալիքների վերաբերյալ ռազմավարական վերլուծություն իրականացնելու գործընթացի մանրակրկիտ ներկայացմանը: Եվրոպոլի ռազմավարական վերլուծության թիմի ներկայացուցիչները ներկայացրին նմանօրինակ զեկույցների պլանավորման գործում զեկույցի տեխնիկական նկարագիր ունենալու կարևորությունը: Անդրադարձ կատարվեց վերլուծական հարցեր առաջադրելու և Եվրոպոլի մշակած հանցավորության ցուցիչներին, որոնց օգնությամբ առաջադրվում են տարբեր հիպոթեզներ: Օրակարգի բոլոր թեմաների վերաբերյալ մասնակիցները ներկայացրել են իրենց փորձը, որ ձեռք են բերել ծրագրի 1-ին փուլի շրջանակում վերլուծական զեկույցի մշակման աշխատանքներ իրականացնելիս: Վերլուծական հարցերի և ցուցիչների վերաբերյալ եղան գործնական վարժություններ:

Աշխատաժողովի 2-րդ օրը ներկայացվեց SIRIUS նախագիծը: Այն Եվրոպոլի և Եվրոջասթի հետ համատեղ իրականացվող նախագիծ է, որը ԵՄ անդամ երկրներին աջակցում է տարբեր ընկերություններից

ձեռք բերել էլեկտրոնային ապայցույցներ: Նախատեսվում է ընդլայնել նշված նախագիծը՝ այն հասանելի դարձնելու համար նաև ԵՄ անդամ չհանդիսացող երկրներին:

Հանդիպումը եզրափակվեց 3-րդ բաղադրիչի շրջանակում իրականացվող հերթական վերլուծական նախագծի պլանավորման վերաբերյալ երկու խմբերի հետ առանձին քննարկումներով: Մասնակիցները համաձայնության եկան հաջորդ վերլուծական աշխատանքը ներկայացնելու ծրագրի շահառու երկրներում առաջնահերթություն համարվող հանցագործությունների վերաբերյալ՝ վաղ ազդարարման ծանուցումների կամ հետախուզական ծանուցումների ձևաչափով:

ԿԱՅԱՑԱՎ TOPCOP II ԾՐԱԳՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունիսի 5-6-ը Բուդապեշտում կայացել է ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարում վերապատրաստում և գործառնական համագործակցություն» (TOPCOP) ծրագրի երկրորդ փուլի ազգային համակարգողների առաջին աշխատաժողովը:

Կրթահամալիրից մասնակցում էր միջազգային համագործակցության և հանրային կապերի բաժնի պետ Կարինե Սաֆարյանը:

Օրակարգային կարևոր հարցերից էին TOPCOP ծրագրի շրջանակում փուլային վերապատրաստում անցնող ՀՀ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից գիտելիքներն ազգային մակարդակում փոխանցելու գործընթացի իրագործումը, ինչպես նաև նշված վերապատրաստումների բովանդակությունն իրավապահ մարմինների կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներդնելը:

Քննարկումներ եղան CEPOL-ի 2025թ. փոխանակման ու մենթորական ծրագրերի արդյունավետ իրականացման, իրավապահ մարմինների աշխատակիցների թվային կարողությունների ու հմտությունների զարգացման կարևորության վերաբերյալ:

Առանձին քննարկում նվիրված էր TOPCOP ծրագրի 3-րդ բաղադրիչի (հանցավոր սպառնալիքների գանահատում և հատուկ աջակցություն) համակարգողների դերին և վերջիններիս վերլուծական աշխատանքների կատարման կարևորությանը: Կարողությունների հզորացման և վերլուծության գծով ազգային համակարգող Կ. Սաֆարյանը ներկայացրեց ծրագրի առաջին փուլի շրջանակում վերլուծության գծով պատասխանատուների իրականացրած ողջ աշխատանքը, հանցավոր սպառնալիքների գնահատման ռազմավարական զեկույցի նախագծման ընթացքում հանդիպած բոլոր մարտահրավերներն ու դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիներն ու լուծումները: Կ. Սաֆարյանն անդրադարձավ նաև 3-րդ բաղադրիչի արդյունավետ իրականացման հարցում ծրագրի մյուս բաղադրիչների համակարգողների կողմից աջակցություն ու համագործակցային մոտեցում դրսևորելու անհրաժեշտությանը:

Աշխատաժողովի ընթացքում վերահաստատվեցին ծրագրի տարբեր բաղադրիչների համակարգողների դերերի կարևորությունը, վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները, վերապատրաստման դասընթացներում ընդգրկված մասնակիցների հաշվետվողականությունը:

Աշխատաժողովի երկրորդ օրը նվիրված էր շահառու երկրների և CEPOL-ի միջև երկկողմանի հանդիպումներին: TOPCOP ծրագրի աշխատակազմի հետ հանդիպմանը քննարկվեցին 2024թ. դեկտեմբերին ազգային գվարդիայի ձևավորմանն ընդառաջ՝ մարդու իրավունքների վերաբերյալ TOPCOP ծրագրի հետ համատեղ Կրթահամալիրում կազմակերպված դասընթացին հաջորդող անելիքները, մասնավորապես՝ նշված վերապատրաստման մասնակիցների կողմից համանման դասընթաց անցկացնելու կազմակերպչական հարցերը:

Քննարկվել են նաև միջազգային գործընկերների մասնակցությամբ համայնքային ոստիկանների համար համայնք և ոստիկանություն հարաբերությունների վերաբերյալ առցանց դասընթաց կազմակերպելու հնարավորությունը և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՀՆԳՕՐՅԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հունիսի 2-ից մեկնարկեցին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման հիմնական կրթական ծրագրի 6-րդ հոսքի համակարգողների և դասընթացավարների վերապատրաստման 5-օրյա դասընթացները: Դասընթացներն անցկացվելու են երկու առանձին խմբերով:

Առաջին խմբի վերապատրաստման դասընթացները նախատեսված են Կրթահամալիրի այն աշխատակիցների համար, որոնք որպես համակարգողներ ներգրավված են լինելու «Պարեկ» որակավորման հիմնական կրթական ծրագրի 6-րդ հոսքի դասընթացների կազմակերպման և վերահսկողության գործընթացում:

Երկրորդ խմբում վերապատրաստում են անցնելու «Ծառայության իրականացման մարտավարություն» և «Հատուկ ֆիզիկական պատրաստականություն» մոդուլների դասընթացավարները:

Վերապատրաստման դասընթացներն իրականացնելու են ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության ծրագրի (ICITAP) Հայաստանի գրասենյակի ներկայացուցիչները, որոնք ներգրավված են եղել «Պարեկ» որակավորման նախորդ 5 հոսքերի դասընթացների կազմակերպման և անցկացման գործընթացներում:

Դասընթացների մեկնարկին ողջույնի խոսքով հանդես եկավ Կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մանուկ Մուրադյանը:

Մ. Մուրադյանն իր խոսքում նշեց, որ սույն վերապատրաստումները միտված են «Պարեկ» որակավորման հիմնական կրթական ծրագրի 6-րդ հոսքի դասընթացների նախապատրաստական և ընթացիկ աշխատանքների պատշաճ կատարմանը, ուսումնական գործընթացի հսկողությանը, դասընթացավարների հմտությունների խորացմանը, վերջիններիս մեթոդական աջակցությանը և այլն:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՄՔՀՎ ծրագրի հայաստանյան համակարգող Ամալյա Հովսեփյանը՝ նշելով, որ ՄՔՀՎԾ-ի վերապատրաստողները նպատակ ունեն 5-օրյա վերապատրաստման դասընթացների ընթացքում իրենց՝ «Պարեկ» որակավորման կրթական ծրագրի իրականացման շրջանակներում ձեռք բերած 5 տարիների փորձն ու գիտելիքը փոխանցել աշխատակիցներին և 6-րդ հոսքի կազմակերպման և վերահսկողության գործընթացում և ՄՔՀՎԾ-ի ներկայացուցիչները կաշխատեն համատեղ, սակայն արդեն հաջորդող հոսքերի համակարգման ողջ գործընթացը կստանձնեն միայն Կրթահամալիրի՝ սույն վերապատրաստումն անցած աշխատակիցները:

«Ծառայության իրականացման մարտավարություն» և «Հատուկ ֆիզիկական պատրաստականություն» մոդուլների դասընթացավարների համար 5-օրյա վերապատրաստման դասընթացներն անցկացնելու են ՄՔՀՎ ծրագրի հայաստանյան գրասենյակի առաքելության խորհրդական Դեյվիդ Մայքլ Լոպեսը և իրավապահ համակարգի գծով խորհրդատու Մայքլ Բեյթսը:

Վերապատրաստման դասընթացների մեկնարկին ներկա էին նաև Կրթահամալիրի պրոռեկտորներ՝ Մ. Մարկոսյանը, Է. Մարգարյանը և ոստիկանական ուսումնական ստորաբաժանման պետ Գ. Գրիգորյանը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

ՆԵՄԵՍԻՍԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Ներքին գործերի նախարարության վետերանների կողմից հանցավորության դեմ պայքարի, իրենց հուշերի վերաբերյալ գրվել են բազմաթիվ գրքեր, որոնք պահպանվում են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ոստիկանության պատմության թանգարանում: Սույն հոդվածը նվիրված է նշված գրքերից մեկին:

Միլիցիայի պաշտոնաթող գնդապետ Ռաֆայել Արսենի Սիմոնյանը 1998 թ. հրապարակել է «Նեմեսիսի զավակները» գիրքը, որը նվիրված է հանցագործությունների բացահայտման բարդ ու դժվարին աշխատանքին, որում իրենց արտացոլումն են գտել նաև սովետական հասարակարգի հակոտնյա կողմերը:

Ռ.Սիմոնյանը ծնվել է 1938 թվականին: 1960 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, իսկ 1983 թվականին՝ նույն համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել է հանրապետության ներքին գործերի նախարարության համակարգում: 1980-1987 թվականներին ղեկավարել է Սևանի շրջանի ներքին գործերի բաժինը, իսկ 1987-1990 թվականներին՝ մայրաքաղաքի Սովետականի շրջանի ներքին գործերի բաժինը: 1990 թվականին անցել է կենսաթոշակի:

Ռ.Սիմոնյանը գրքում նշում է, որ Ներքին գործերի նախարարությունը պետության, հասարակության և անհատի ներքին անվտանգությունն ապահովելու՝ իշխանության գործիքն է: Այն իշխանության համակարգում կազմակերպությունների տեսակ է, իսկ իրավապահ մարմինների կառուցվածքում՝ իրավակարգի ապահովման և հանցավորության դեմ պայքարի կենտրոնական օղակը:

Ներքին գործերի նախարարությունը՝ որպես պետական ապարատի կարևոր կառուցվածքային բաղադրիչներից մեկը, ենթարկվում է բազմաթիվ ազդեցությունների: ՆԳՆ աշխատակիցները հաճախ ստիպված գործել են հատուկ պայմաններում:

Ներքին գործերի բաժինների ղեկավարները բավականաչափ չեն տիրապետել սոցիալական հոգեբանության հիմունքներին և կոնֆլիկտների կառավարման մանկավարժական մեթոդներին: Կոնֆլիկտային հակասությունների լուծման ձևերի և մեթոդների ոչ բավարար իմացությունը կադրերի հոսունության, մասնագիտական կորիզի աստիճանական քայքայման, քրեականացման դրսևորումների, օրենքի խախտումների, քաղաքացիների նկատմամբ կոպիտ և անհարգալից վերաբերմունքի պատճառ են դարձել:

Ռ.Սիմոնյանը նշում է, որ ՆԳՆ ծառայողները հիմնականում կոնֆլիկտային իրավիճակների մեջ են մտել հանցագործությունների բացահայտման և կանխարգելիչ գործողությունների ժամանակ: Հանցագործությունների բացահայտման ընթացքում կոնֆլիկտային իրավիճակները հաճախ բնութագրվել են մեծ հուզականությամբ, ժամանակի զգալի տևողությամբ, հնարավոր հետևանքների լայն շրջանակով և օրենքը խստորեն պահպանելու անհրաժեշտությամբ:

ՆԳՆ աշխատանքը բնութագրվել է աշխատանքի անկանոնությամբ, պատասխանատվության բարձր աստիճանով, մշտական ծանրաբեռնվածությամբ, իրավասության և գործառութային պարտականությունների անորոշությամբ:

Կառավարման անկատարելիության պատճառով ղեկավարության կողմից չափազանց մեծացել է վարչարարությունը, անտեսվել են մարդկանց մասնագիտական հմտությունները և հոգեբանական բնութագրերը:

Նկատվել են ռեպրեսիվ վարքագծի և քաղաքացիների իրավունքների և շահերի անտեսման դրվագներ, որն առաջին հերթին պայմանավորվել է ներքին գործերի մարմիններում կադրերի ընտրության աշխատանքներում առկա բացահայտ թերություններով:

Ռ.Սիմոնյանը նշում է նաև, որ ավելի ու ավելի շատ երիտասարդ մասնագետներ են համալրել ՆԳՆ համակարգը, որոնք պատրաստ են եղել կատարել իրենց ծառայողական պարտականությունները՝ փորձելով մաքրել հասարակությունը հանցավորությունից և իրավախախտներից:

Ռ.Սիմոնյանի «Նեմեսիսի զավակները» գիրքը պետք է դառնա յուրաքանչյուր ոստիկանի ուղենիշը, քանի որ գրքի բովանդակությունը թույլ կտա հասկանալ ՆԳՆ համակարգի կարևորությունը, հանցավորության դեմ պայքարում դժվարությունները, հնարքները և հասարակության համար օրինականությունը պահպանելու կարևորագույն առաքելությունը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ 16-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) հրավերով մայիսի 20-21-ը ՆԳՆ Կրթահամալիրի պրոռեկտոր Արմինե Հայրապետյանը գործուղվել է Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Մեց՝ մասնակցելու «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» Կոնվենցիայի շրջանակներում «Արդյունաբերական աղետներից քաղված դասեր» խորագրով 16-րդ համաժողովին:

Կոնվենցիայի նպատակն է աջակցել անդամ պետություններին կանխարգելել անդրսահմանային ազդեցությամբ արդյունաբերական վթարները, պատրաստվել դրանց դիմակայելուն և արձագանքմանը:

Երկօրյա համաժողովի ընթացքում քննվել են Ֆրանսիայի Հանրապետության տարբեր բնակավայրերում և արդյունաբերական համալիրներում տեղի ունեցած մի շարք աղետներ՝ կապված նոր արդյունաբերական և տնտեսական զարգացումների արդյունքում առաջացող ռիսկերի հետ: Առանձին քննարկման նյութ են հանդիսացել այլընտրանքային էներգիայի փոխակերպման արդյունքում առաջացող նոր ռիսկերը, էներգիայի կուտակման սարքերի, մարտկոցների պահեստավորման և թափոնների վերամշակման վայրերում տեղի ունեցող վթարները, ինչպես նաև այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ է հաղորդել նման զարգացումներին դեռևս անպատրաստ արձագանքման՝ հրդեհաշիջման ուժերին:

Քննարկվել են, մասնավորապես, լիթիումային մարտկոցների վերաբերյալ հիմնական տեխնոլոգիական և անվտանգային ռիսկերն ու վտանգների նվազեցման ուղղությամբ աշխատանքները, ջրհեղեղների ազդեցությունն արդյունաբերական օբյեկտների և վտանգավոր տեղամասերի վրա, փոթորիկներից ու ջրհեղեղներից քաղված դասերը՝ ճգնաժամային կառավարում և վերականգնում, միջազգային համագործակցության դերակատարությունն արդյունաբերական ռիսկերի նվազեցման գործում և այլ օրակարգային հարցեր:

Հարկ է նշել, որ Կոնվենցիայի շրջանակներում աղետների ռիսկերի վերաբերյալ գիտելիքների, քաղված դասերի փոխանցման համար կանոնավոր մշակվում և հրատարակվում են ուղեցույցներ և տեսանյութեր: Նման նյութերի թարգմանությունը հնարավորություն կընձեռի դրանք լայնորեն կիրառել Կրթահամալիրի ուսումնական և վերապատրաստման ստորաբաժանումների համապատասխան դասընթացներում:

Գործուղման օրերին Կոնվենցիայի բյուրոյի նախագահ Մարի-Կլեր Լհենրիի և քարտուղարության ներկայացուցիչ Ելիզավետա Ռուբաչի հետ քննարկվել է ժնևում կայանալիք GP2025 աղետների ռիսկի նվազեցման գլոբալ պլատֆորմին մասնակցության, Կոնվենցիայի աշխատանքները ներկայացնելու ուղղությամբ բյուրոյի անդամ Ա.Հայրապետյանի ներկայացվելիք հարցերի շրջանակը, նախանշվել հանդիպում ԵՏՀ ղեկավարության ներկայացուցչի հետ:

ԻՄ ՄՈԼՈՐԱԿԸ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՐՀ Է

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՓԾ ճկ ուսումնական ստորաբաժանման 2-րդ կուրսի սովորող Սոնյա Ավակյանի հետ:

- Ինչպիսին էր փոքրիկ Սոնյան. երեք նախադասությամբ պատմի՛ր քո մասին:

- Փոքր ժամանակ աշխույժ, մի քիչ ցրված, բայց միաժամանակ նպատակասլաց ու ակտիվ երեխա էի: Սիրում էի շփվել մեծերի հետ, հաճախ նրանց հետ ավելի մոտ էի, քան իմ տարիքի երեխաների, բայց նաև կարողանում էի համախմբել իմ հասակակիցներին ու դառնալ ընկերական միջավայրի կենտրոնը:

- Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Մանկության տարիներին անսահման հետաքրքրասեր էի՝ ամեն ինչ ուզում էի անձամբ փորձել: Այդ «հետազոտական ոգին» ինձ հասցրել է կոյուղի ընկնելու, կոմպոտից այրվելու ու անգամ ազոտ ճաշակելու: Բայց ամենաարտառոցը երևի շներից վախն էր. դպրոց գնալու փոխարեն գաղտագողի մտնում էի հարևանի տուն, արթնացնում էի նրան ու ամբողջ վստահությամբ խնդրում՝ գոնե այսօր դո՛ւ տար ինձ դպրոց:

- Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Դպրոցում ես այն աշակերտուհին էի, ում միաժամանակ ճանաչում էին և՛ օրագրից, և՛ բեմից: Գերազանց սովորում էի, բայց դասերից բացի նաև ներգրավված էի ամեն ինչում՝ երգի ու պարի հայկական խմբակից մինչև տիկնիկային և բեմադրական ներկայացումներ: Ակտիվությունս սահման չուներ. որտեղ շարժում էր՝ այնտեղ ես էի:

- «Փոքրիկ իշխան». Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը:

- Իմ մոլորակը համերաշխության վրա հիմնված վարդագույն աշխարհ է՝ պարզ, մեղմ ու ներդաշնակ: Այստեղ մարդիկ բաց են, չեն ամաչում արտահայտել իրենց զգացմունքները և հոգ են տանում միմյանց հոգևոր հավասարակշռության մասին: Չնայած ամեն ինչ թվում է իդեալական, մարդիկ հասկանում են, որ անգամ կատարյալ աշխարհում կարող ես հոգնել. հենց դրա համար էլ այստեղ փրկարարներն օգնում են բնության անկանխատեսելի պահին, իսկ հոգեբանները՝ երբ մարդուն պարզապես պետք է լսել՝ առանց դատելու:

- Ի՞նչ ես կարծում, կա՞ն վատ գրքեր:

- Չկան վատ գրքեր, կան գրքեր, որոնք դեռ չհասած ընթերցողին են հանդիպել: Յուրաքանչյուր գիրք կարող է գտնել իր ընթերցողին ճիշտ ժամանակին: Ընթերցանությունը գրողի ու կյանքի տարբեր փուլերում մեր «ես»-ի միջև երկխոսություն է:

- Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը:

- Ալեքս Մայքլիդիսի «Կույսերը» գիրքն ինձ ստիպեց խորհել ոչ թե միայն սպանության գաղտնիքի, այլև մարդկային ներաշխարհի մութ անկյունների մասին: Այն խեղդում է վստահության սահմանները՝ ցույց տալով, որ երբեմն ամենավտանգավոր մարդիկ կարող են լինել ամենախարիզմատիկները: Այդ գիրքն ինձ հիշեցրեց, որ կյանքում ոչինչ միանշանակ չէ, հատկապես՝ մարդը:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Երազում եմ զարգանալ՝ ոչ միայն մասնագիտության մեջ, այլև որպես մարդ: Ինձ համար կարևոր է, որ յուրաքանչյուր օր ինձ մոտեցնի մի ավելի խոր, գիտակցված «ես»-ի: Ուզում եմ ապրելու ձևս լինի այնպիսին, որ նույնիսկ ամենահասարակ օրը թողնի իմաստ, որը չեմ մոռանա:

- Նախասիրություններ. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Երաժշտությունն լսելիս ես քայլելիս եմ կարողանում մի քանի ժամ մոռանալ ամենօրյա մտահոգությունները: Լավ ֆիլմեր դիտելը ևս լավ հնարավորություն է կտրվել մտքերից, մտածել ուրիշ աշխարհների մասին: Մի քանի հետաքրքիր հոդված կարդալով կամ նոր բան սովորելով՝ զգում եմ, թե ինչպես է թարմանում միտքս: Իսկ երբ զգում եմ, որ պետք է հանգստանամ, սովորական քունն է ինձ համար փոքր ընդմիջում:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Իմ հայրիկը աշխատում է համակարգում, ու փոքրուց տեսել եմ, թե ինչ պատասխանատվությամբ ու նվիրումով է կատարում իր գործը: Դա արթնացրեց իմ հետաքրքրությունը. ուզում էի նաև ես լինել այն մարդը, ով կարող է օգնության հասնել արտակարգ իրավիճակներում: Ընտրեցի փրկարար ծառայության կառավարման մասնագիտությունը, որովհետև ուզում եմ փրկել ոչ միայն կյանքեր, այլ նաև հոգի՝ հետագայում սովորելով հոգեբանություն:

- Ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Կրթահամալիրի ուսանողական կյանքը երբեմն լարված, բայց հետաքրքիր և զարգացնող է: Առաջարկվում են տարբեր մասնագիտական ծրագրեր, ակտիվորեն կազմակերպվում են մշակութային ու սպորտային միջոցառումներ: Ուսանողը պետք է կարողանա հավասարակշռել ուսումը և սոցիալական կյանքի ակտիվությունը:

- Նկարագրի՛ր Կրթահամալիրի սովորողի կերպարը:

- Կրթահամալիրի սովորողը նպատակասլաց, կարգապահ և պատասխանատու մարդ է, ով գիտակցում է, որ հաջողության համար անհրաժեշտ է մաքսիմալ ուշադրություն հատկացնել ուսմանը: Նա ոչ միայն փորձում է մնալ դասերի թեժ հոսքի մեջ, այլև մասնակցում է տարբեր խմբակների ու միջոցառումների, սակայն գիտի՝ ամենակարևորը մշտական պատրաստակամությունն է սովորելու և սեփական զարգացումն ապահովելու համար: Այս կերպարը պահանջկոտ է ինքն իր նկատմամբ, քանի որ գիտի՝ արդյունքը գալիս է ջանքերի հետևանքով:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Եթե հնարավորություն տրվեր, հավանաբար ընտրեի իրավաբանություն: Շատ հետաքրքիր է ինձ համար հասկանալ, թե ինչպես են օրենքներն աշխատում մեր կյանքում, և ինչպես կարելի է մարդկանց պաշտպանել դրանց միջոցով: Իմ կարծիքով՝ եթե գիտես օրենքը, ուրեմն ուժեղ ես, որովհետև դա թույլ է տալիս ճիշտ գործել ու պաշտպանել քո իրավունքներն ու ուրիշներին: Իհարկե, հոգեբանությունը շարունակում է գրավել ինձ, բայց իրավաբանությունը կբացի նոր դռներ ու մարտահրավերներ, որոնց ուզում եմ պատրաստ լինել:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Կյանքի իմաստի, մարդու ներքին զգացումների և հավատքի թեմաներն ինձ միշտ գրավել են: Հետաքրքիր է հասկանալ, թե ինչպես հավատքն ինքներս մեզ, ուրիշներին և մի մեծագույն ուժի հանդեպ կարող է օգնել դժվար պահերին հաղթահարել: Այդ թեմաների շուրջ խոսելիս միշտ բացվում են նոր մտքեր, որոնք ուզում ես փոխանակել ու լսել ուրիշների տեսակետները:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Ներքին կրակը՝ շարժվելու, գործելու և ապրելու: Երբ ներսից ուժ ունես, ոչինչ չես վախենա փորձել: Գիտակցումը, որ յուրաքանչյուր օրը նվեր է, օգնում է ոչ միայն գնահատել պահը, այլ նաև թույլ չտալ, որ մեր վախերն ու մտածելակերպը սահմանափակեն մեզ: Այդ գիտակցումն ու էներգիան են, որ ինձ առաջ են մղում ամեն օր:

Բլից հարցեր

Պատասխանում ենք կարճ և արագ:

-Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Նպատակասլաց, զգացմունքային, խարիզմատիկ:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Այսօր մի բան պիտի փոխեմ:

- Օրն սկսում ես ժամը...

- 05:00-ին, եթե դասի եմ,իսկ այլ դեպքերում՝ 10:00-ին:

- Սիրածդ աֆորիզմը:

- «Մեր ընտրություններն են, որ ցույց են տալիս՝ ով ենք մենք իրականում, շատ ավելին, քան մեր ունակությունները»:

- Սիրելի զբաղմունքդ:

- Երաժշտություն լսել, քայլել, քնել և ընկերներիս հետ ժամանակ անցկացնել:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Ապրի՛ր այնպես, որ նույնիսկ դժոխքի միջով անցնելիս չմոռանաս նայել վերև՝ դեպի լույսը:

-Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին):

- Կյանքը մեզ տալիս է հնարավորությունների անսպառ շարք՝ ընտրելու, ստեղծելու, աճելու և վերափոխվելու, բայց այդ հնարավորությունները չեն գալիս միայն մեր անձնական բարգավաճման համար:

Այո՛, կարևոր է կառուցել մեր երջանկությունը, հասնել նպատակներին, ապրել լիարժեք, բայց նույնքան կարևոր է՝ այդ ամենն անել այնպես, որ դրանով ավելի լավը դառնա ոչ միայն մեր կյանքը, այլ նաև աշխարհը, մարդկանց կյանքը:

Երբ փորձում ենք օգտագործել մեր հնարավորությունները ոչ միայն մեր, այլ ուրիշների բարօրության համար, կյանքն ստանում է ավելի խոր իմաստ: Ու հենց այդպես էլ ձևավորվում է այն աշխարհը, որի մասին բոլորս երազում ենք:

Հարցազրույցը վարեց
Ա. Քոչարյանը

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՆՊԱՏԱԿԸ ԿՅԱՆՔԻ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԻՑ ՄԵԿՆ Է

Նպատակը կյանքի շարժիչ ուժերից մեկն է. երջանիկ լինելու համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի մասնագիտություն, որ էությանդ համահունչ լինի: Ես մինչև դպրոցն ավարտելը որոշել էի ընտրել այնպիսի մի մասնագիտություն, որը սերտ կապ կունենար պետության, հասարակության, արդարության և նմանատիպ այլ սոցիալ-հասարակական երևույթների հետ:

Ապագա մասնագիտության ընտրության որոնումներում վերջապես ընտրեցի իրավաբանի մասնագիտությունը, քանի որ իրավաբանի կարևոր առաքելություններից է պետության, հասարակության, մարդու իրավունքների պաշտպանությունը և արդարության վերականգնումը: Այս որոշումս իր հերթին առաջ բերեց նպատակներ, որոնց իրականացումը հնարավոր է դառնում միայն կրթություն ստանալով:

Քանի որ ՆԳՆ կրթահամալիրն ապահովում է որակյալ կրթություն, որոշեցի սովորել այդ բուհում:

Ընդունվեցի ՆԳՆ կրթահամալիր, և այստեղ սովորելու ժամանակ էլ ավելի ամրապնդվեցին նպատակներս, որոնց իրականացման համար ջանք չեմ խնայելու, որպեսզի լիարժեք գիտելիքներով սկսեմ մասնագիտական գործունեությունս: Միանշանակ է, որ որակյալ կրթությունն ապահովում է և՛ վստահություն, և՛ հարգանք, որն էլ օգտակար կլինի մեր կյանքը բարելավելու ու մեր պետությունը զարգացնելու հարցում:

Վարդան Կարապետյան
Իրավագիտության ֆակուլտետ, 3-րդ կուրս

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

Նախորդ համարում զետեղված հարցերի պատասխանը՝

1. Շախմատում:
2. Տղամարդն իր համարը մտնելու համար դուռը չէր թակի:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30.04. 2025թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան